



“ ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆ ՏՆՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ ” ԴՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ ԺԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1883

ԹԻՒ 12



ՆԴՐԱ ՅՆՁԱՐԷԻ ԱՌՋՆԻ ԿՅՈՒՆ

ՅԵՋԱԲԷԼ

Յեզարէլ թագուհին, իսրայելի Ա. քայաբ թագաւորին կինը, յանդգնութեան և քափութեան հետ, ունէր նաև գողաբներին և խաբուածին :

Յեզարէլի ազդեցութեանն առաջին ապրիլին այս է, որ այս թագուհին որ փրկեց թագաւորին ազջիկն էր՝ անոնց աստուածներուն պաշտօնը

հաստատած էր Ա. քայաբու արքունեաց մէջ : Փրկեցեց իր կողմէն աստուածներուն նախկեղ երկու մեհեան կար իսրայելի թագաւորութեան երկու նոր մայրաքաղաքներուն մէջ, ի միումն՝ Բահաղու, և ի միւսումն՝ Աստարտայ : Աստարտայ մեհեանը, իւր սովորական անտառան, էր ընդ տես-

չութեամբ այս Յեզարէլայ՝ Յեզարայէլ քաղաքին պալատան մօտ : Չորս հարիւր քուրմք կամ մարդարէք կը սպասաւորէին Աստարտայ, և կ'ուսէին Յեզարէլի սեղանը : Բայց Ասիի որդւոյն Ա. քայաբու ոչ կուպաշտութիւնը և ոչ հալածումը մարդարէից դէմ, այլ անոր անիրաւութիւնն հասարակ քաղաքացւոյ մը դէմ փութացուց այն ազգա-

տոհմին վերջին պատուհասը : Չեն անգէտ Նաբովթայ այգւոյն պատմութեան անոնք որ գիտեն Սուրբ դիրքը : Աքայար ցանկացաւ այգւոյն : Բայց չհամարձակեցաւ առնուլ բռնի : Սակայն պալատան մէջ կար մէկը , այսինքն Յեզարէլ , որոյ փոյթ չէր ամենեւին խիղճը որ կը տագնապէր ՂԱքայար , խորայելի թագաւորաց յուսեղոյնն անդամ : Ամբարտաւանութեամբ որով առաւել էր քան իւր տկար այրն Աքայար , Յեզարէլ դաւով առ Աքայար կ'ըսէ , « Այսպէս պիտի թագաւորես խորայելի վրայ : Ել , հաց կեր , թող զուարճանայ սիրտը . Յեզարայելայի Նաբովթայ այգին ե՛ս պիտի տամ քեզ » : Յեզարէլ քարկոծել ստաւ զՆաբովթա և անոր որդիքը , և դայով ըսաւ Աքայարու , « Նաբովթ ողջ չէ , այլ մեռաւ , ել , ժառանգ է այգին » :

Աքայար գնաց խիղջն առնուլ այգին որուն կը բաղձար , և որ այնպէս ծանրագին եղաւ անոր : Երբ Աքայար մտեցաւ այգւոյն , աեսաւ հոն մարդ մը , որպէս թէ Նաբովթ ելած էր գերեզմանէն իմացնելու համար թագաւորին անոր յափշտակութեան անօրէնութիւնը : Եղիւ էր այն կերպարանքը , որ կու գար , չենք գիտեր ուստի : Անոր շրթունքէն ելան քանի մը ահաւոր խօսքեր միայն , որ իբր թէ շան թահար ըրին թագաւորը :

Եղեայի սղառնալիքը ճշդիւ կատարուեցան Յեզարէլայ վրայ , թէպէտ քանի մը տարի ետքը : Աքայարէ բաւական ետքը խորայելի վրայ թագաւորող Յէուի հրամանաւ , Յեզարէլայ ներքինիք անոր պալատին պատուհանէն վար նետեցին ծերացեալ թագուհին : Յեզարէլ ինկաւ պալատին առջև ոսկից կ'անցնէր Յէուի կառքը , այնպէս որ Յեզարէլի արեւը ցոյցեց պալատին պատին և միանգամայն ձիւրուն վրայ որ կոխտեցին իրենց սըմբակներովը կիսամեռ թագուհին : Յէու իւր մարդերով մանելով պալատը նրատաւ կատարել իւր յաղթութեան տունը : Բայց խրախուսեանէն ետքը ի գուժ շարժելով Յէու հրամայեց իւր սպասուորներուն երթալ թագու թագուհին , որ , թէպէտ ոճրագործ , էր սակայն դուստր թագաւորի : Բայց ուշ արուեցաւ հրամանը : Յեզարէլի մարմինը նետուած էր քաղաքէն դուրս աղբանոց մը , ուր ըստ արեւելեան սովորութեան կը նետուէին քաղաքին ազտեղութիւնները : Հոն Յեզարայելի շուները կերած էին Յեզարէլայ մար-

մինն ըստ մարդտէութեան : Անոր դանկը , և ձեռաց և ոտից թոթեքը միայն մնացած էին :

ՁԻՍ ԿԱՆՈՒԻ ՓՆՏՈՂՆԵՐԸ
ՁԻՍ ԿԸ ԳՏՆԵՆ
(Առակ . Ը . 17)

Աստուածային իմաստութիւնն է որ Սողոմոնի բերնով կ'ըսէ վերի խօսքը : Սողոմոն բարձր գողափար ունէր իմաստութեան վրայ : Առակաց դիրքին մէջ ուրիշ տեղ մը կ'ըսէ , « Ասիկա (իմաստութիւնն) գոհարներէն պատուական է . և քու բոլոր ցանկալի բաներդ չեն կրնար անոր հաւասարիլ » (Գլ . Գ . 13) : Գոհարը , ինչպէս գիտէք , է պատուական քար , որ գրեթէ ազամանդի չափ յարդի է : Բայց իմաստութիւնը ոչ միայն գոհարէն աւելի պատուական է , այլ պատուական է քան զայլ ամենայն ինչ որուն կը փափաքին մարդիկ : Աշխարհի վրայ կան ցանկալի շատ բաներ , այնպիսի բաներ զոր մարդիկ կ'ուզեն ստանալ : Անոնք որ ազքատ են կը փափաքին ստանալ հարստութիւն , և անոնք որ հիւանդ են կը փափաքին ստանալ առողջութիւն : Տղայք նաև կը փափաքին շատ բաներու : Եթէ տղու մը հարցուի թէ ինչ բաներու կը փափաքի , կու տայ երկար ցանկ մը այլևայլ բաներու որ արդարև փափաքելի են : Բայց այս ցանկն որչափ ալ երկայն ըլլայ , և փափաքելի բաներն որչափ ալ շատ ըլլան , Սողոմոն կ'ըսէ մեզ թէ իմաստութիւնը պատուական է քան զայն ամենայն , և այնչափ աւելի պատուական որ ուրիշ փափաքելի բաներ չեն կրնար իսկ համեմատուիլ իմաստութեան հետ :

Սիրելի տղայք , գուք թերևս երբէք կարող պիտի չըլլաք ստանալ զաման այն բաներէն որոց կը փափաքիք : Շատեր կը փափաքին հարստութեան , և իրենց բոլոր օրերը կ'աշխատին հարստութիւն գիղելու , բայց ի դուր : Եւ անոնք որ պատրաստ են ամէն բան սուլ առողջութիւն ստանալու համար , հաղորաւոր մղոններ կը ճամբորդեն հեռաւոր երկիրներու մէջ , սակայն և այնպէս չեն յաջողիր ձեռք բերել այն բանն որուն կը փափաքէին այնչափ կոթողի : Սակայն իմաստութեան մասին այսպէս չէ : Եթէ փափաքիք իմաստութիւն ստանալ , կրնաք անատրափոյս ստանալ զայն : Տղայք , խորհեցէք այս կէտին վրայ :

Կրնաք ստանալ բան մը որ շատ աւելի պատուական է քան զգոհարս և քան զայլ ամենայն ինչ որուն կրնաք ցանկալ : Եթէ փնտռէք , կրնաք գտնել այս բանը : Նա մանուանդ տղայք աւելի պատեհութիւն ունին զայն գտնելու : Բայց փնտռելու էք զայն բռնաբար , ոչ իբր կ'ըսէ ձեռք ձեռքը :

Փնտռելու էք զայն բռնաբար : Եթէ կ'ուզես գտնել բան մը , փնտռելու ես զայն ուր է : Եթէ բուստ փնտռէք ծովուն եզերքը քարերու մէջ , չէք կրնար գտնել , որչափ ալ շատ փնտռուէք : Բայց եթէ խեցի և խիճ փնտռուելու ըլլաք , կրնաք սուանց դժուարութեան գտնել ծովեզերքը : Արդ , մեր կը գտնուի իմաստութիւնն որ պատուական է քան զգոհարս : Իմաստութիւն ստանալու համար Աստուծոյ գիտելու էք : Սուրբ գիրք կ'ըսէ , « Թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակասած ըլլայ , թող խնդրէ Աստուծմէ որ ամենուն առատապէս կու տայ ունիւտներ , և անոր պիտի արուի » (Յակ . Ա . 3) : Բայց այս համարէն հասկրնալու չենք թէ իմաստութիւն ստանալու համար մէկ անգամ միայն աղօթքով Աստուծոյ գիտել բաւական է : Ամէն օր գիտելու ենք առ Աստուած , և գիտելու ենք առ նա ամէն գժուարութեան մէջ , Եթէ ձեռնէ մէկը գրժուարութեան մէջ է , և չգիտեր ինչ ընել , թող ասնի իւր դժուարութիւնն աղօթքով Աստուծոյ , և Աստուած պիտի օգնէ անոր : Գիտելու էք նաև Աստուծոյ խօսքին , վասն զի մեր աղօթից պատասխանները շատ անգամ կը գտնուին հոն :

Ըսինք նաև թէ իմաստութիւնը փնտռելու ենք ոչ իբր կ'ըսէ , և ուղիղ կերպն է խնդրել զայն ի բոլոր սրտէ և անկեղծութեամբ : Եթէ անկեղծ չես , և մինչ Աստուծմէ իմաստութիւն կը խնդրես , անփոյթ ես իմաստութեան , պիտի չգտնես զայն , վասն զի Աստուած զիտէ մարդոց սրտերը , և պատասխան կու տայ այն աղօթից միայն որ ի սրտէ կը բխեն : Եթէ փութով չես փնտռեր , պիտի չգտնես : Աստուած կ'ըսէ , « Ձիւ պիտի գտնէք երբ կը փնտռէք ձեր բոլոր սրտով » :

Փնտռելու էք նաև ճշդ ձեռք ձեռք , և այս առակը մեզ կ'ըսէ թէ իմաստութիւն խնդրելու ենք կանուխ : Կան բաներ որ կանուխ միայն կրնանք ընտալուիլ : Երբ անապատին մէջ քանդանայ կ'իջնէր , խորայելայիք անապատին կանուխ պարտէին ժողովը : Կանուխ ընտալուիլ , արեւը չի լինուիլ զայն : Եթէ օտուգիլ կը փնտռաք

ճշմարիտ իմաստութիւն ստանալ, փրկ-
 տրուելու էք զայն կանուխ ձեր կենաց
 մէջ: Եթէ կանուխ կը փնտռէք, վը-
 տահ եղիք որ պիտի գտնէք: Բայց
 եթէ յապաղիք, թերեւս բնաւ պիտի
 չգտնէք, վասն զի կրնայ ըլլալ որ ի-
 մաստութիւն գտնելէն առաջ մեռնիք,
 կամ ձեր սիրաւ կարծրանայ, և դուք
 անհոգ կ'ըլլաք զայն փնտռելու: Եւ ե-

թէ արութեան կամ
 ծերութեան ատեն
 կարենայիք իսկ դըռ-
 նել իմաստութիւն,
 դարձեալ մեծ կու-
 րուստ ըրած կ'ըլլա-
 յիք կանուխ չփրկա-
 ուելով զայն: Եթէ
 այժմէն դրամասե-
 ղան մը գնէք 400
 լիբա, և հոն թողուք
 զայն, այս ստակն իւր
 շահովը յիսուն տար-
 ւան մէջ կ'ըլլայ ա-
 շելի մեծ գումար
 քան զոր պիտի ըլ-
 լար, եթէ զայն դրա-

մասեղանը դնելէ առաջ քառասուն
 տարի սպասէիք ի զուր: Այսպէս է
 նաև իմաստութիւնը: Զանազէք ստա-
 նալ զայն այժմ, և ետքն աւելի ի-
 մաստուն պիտի ըլլաք քան զոր պիտի
 ըլլայիք եթէ տարիներ անփոյթ մնայիք
 իմաստութեան:


Փ Ի Ղ Ե Բ

Փիղը գիւրաւ կ'ընտանենան
 և կը սիրեն զմարդիկ որ քան
 զնոսա շատ փոքր են հասակաւ
 և ուժով, և կը հնազանդին ևս
 անոնց, բայց են շատ երկչոտ և
 անհամբոյր, երբ անտառներու
 մէջ կ'ապրին վայրագ: Երկրիս
 վրայ շատ տեղ չեն գտնուիր
 փիղը, բայց ուր որ կը գտնուին,
 կը պտտին երամ երամս Վախայն
 և այնպէս ճանապարհորդք
 անտառներու մէջ աւելի քիչ

կը հանդիպին փիղերու քան ու-
 ըիչ վայրի անտառներու: Գլխաւոր
 պատճառն այս է որ այս անասունք,
 թէպէտ այնպէս յողթամարմին են,
 անձայն կը պտտին անտառներու մէջ:
 Անոնց գտնուիլն անտառի մը մէջ կը
 հասկնուի միայն մեզմէ շտապմանէն
 ծառի ճեղքերու և թուփերու զորս
 այս անասունը կը ջախջախէ իւր ու-
 ուղներուն տակ ճամբայ բանալու հա-
 մար: Փիղն ընդհանրապէս չունի գո-
 չիւն: Բայց միայն երբ պատերազմի

մէջ կը դրդուի կամ կը վախնայ, կը
 գոչէ, սակայն չունի տռնեքու և տա-
 լու ատեն կը հանէ թեթև խորդիւն
 մը, բայց այս կամուսը չէ, այլ ար-
 դիւնք շնչառութեան:

Փիղերուն բնական կերակուրն է,
 ինչպէս կ'երևի, հասարակածի երկիր-
 ներուն մեծամեծ խոտերը, ծառի տե-
 լուներ և թուփեր: Բայց փիղերը կը



ՌԵՆՈՒՄ ՓՈՂ

սիրեն մանաւանդ քայքայ բաներ, ինչ-
 պէս շաքարի եղէգ, շաքար և սասնց
 նմաններ, երբ փղի երամակ մը շա-
 քարի եղէգնայ մը կը մանէ, բարբը
 կ'արէ կ'ապականէ: Այլևս կզգին
 ուր բուսեղէնք առատ են, և գոր-
 ծաւորայ աւարչէքն աժան, փիղ մը
 կրնայ քիչ ծախիւք պահուիլ երկու


փիղեր կը բռնուին այլևայլ հնարիւք:
 Այս նպատակին համար կը գործածուի
 երկու էգ ընտանի փիղ պահապանով
 մը որ սե վերարկու մը ունի և ուժեղ
 շուններ, երբ վայրի փիղ մը կը տես-
 նուի, այն երկու էգ փիղերը կը մե-
 տնան անոր, և պահապանը ծած-
 կուելով իւր վերարկուով կը ջանայ
 չտեսնուիլ, բայց եթէ տեսնուի կա-

մայ մը վար կ'իջնէ,
 և էգերը կը սկսին
 քծնել փղի փղին,
 և այսպէս ժամանակ
 կու տան պահապա-
 նին կապել անոր
 ստուըները: Երբեմն
 փիղը կը տարուի
 հնարիւք ծառի մը
 քով ուր պահապանը
 կը հաստատէ փղին
 սանակապին ծայրը:
 Եթէ փիղն ընդդի-
 մանայ կապուելու,
 ընտանի փիղերը կը
 յարձակին անոր վը-
 լայ և չեն թողուր

անոր փախչիլ: Կը պատմուի թէ
 այսպիսի կուուոյ ատեն ընտանի փիղը
 երբեմն իւր կեանքն սնդամ կու տայ
 իւր սիրովը համար: Բռնուած փիղը
 պնդով կապուելէն ետքը մինակ կը
 թողուի: Ի սկզբան կը բարկանայ, կը
 սողնայի, կը մանչէ, և շթողուր
 իրեն մերձենայ: Բայց ուրիշ անաս-
 նոց պէս նաև փիղը չկրնար
 գիմանալ անօթութեան, ուս-
 տի վերջապէս կը հանդարտի և
 կը նուաճի:

Առաջին պատկերը կը ցուցնէ
 փիղ մը երկու ընտանեցեալ փի-
 ղերու միջոցաւ բռնուած, ծա-
 ուի մը կապուած, և տողնա-
 պէն և անօթութենէն ինկած
 սղեսպառ:

Երբեմն փիղը կը բռնուին
 փոսի մէջ, մանաւանդ Ափրի-
 կէ, ուր բնիկները փիղ չեն
 պահեր, այլ զանոնք կ'որսան
 միայն անոնց ժանիքն առնելու, ինչ-
 պէս նաև անոնց թաթերը՝ զորս խո-
 բովելով կ'ուտեն այսորժանօք: Բայց
 փիղ բռնելու յարմարագոյն կերպն է
 զանոնք հրապուրելով տանել փակ-
 ուած տեղ մը ուտի չեն կրնար ելլել:
 Երկրորդ պատկերը կը ցուցնէ ցան-
 կապատ տեղ մը ուր հրապուրանօք
 կամ հարածելով կը տանին փիղեր
 դիւրաւ բռնելու համար:
 Փիղ մը անթերի կը համարուի, եթէ
 ականջները լայն և բարբիչ են, ոչ թէ



ՅԱՆՈՒՊԱՏ ՏԵՂ ՈՒՐ ԿԸ ԲՆԵՆ ՓՈՂԵՐԸ

մարդ բուսական է փղի մը հարկաւոր
 խոտը քաղել և տերևները ժողովել,
 և կամ սա առաւելն՝ երեք մարդ,
 եթէ փիղը մեծ և շատակեր է:

Փիղերու գոյնը միօրինակ չէ: Ափ-
 րիկէի փիղերը քիչ մը աւելի կարմ-
 րագոյն են քան Ասիայիները: Բայց
 սպիտակ փիղը քան զոչոյս աւելի յար-
 դի է, մանաւանդ թէ պաշտելի է
 Ասիոյ մէջ և է մեծաղին:

Մտանցեցեալ փիղերը դուռ ուրեք
 կ'ունենան ծնունդ, ուտտի միշտ փոյրի

պատուած կամ փաստուած . աշուրները մութ կաղնեգոյն՝ առանց բոյ կամ արատոյ . նոյնպէս քիմքը և լեզուն՝ առանց մեծամեծ օւ կամ մթազոյն արատներու : Վերջապէս անթերի կը համարուի փիղ մը , եթէ կնճիթը խոշոր է և աղին երկայն , և աղին մազերը կը հասնին գետնին մօտ : Ունեւորը է հինգ հինգ մազիլ իւր առջևի թաթերուն ծայրերը , և չորս չորս ետևի թաթերուն ծայրերը , ընդ առջևը՝ ութևտանն : Գլուխն ըլլալու է բարձր , և ողնի կամ քամակին կրթութիւնը բարձրանալու է մեզմով ուսերէն մինչև մէջքը , և անկէ նոյնպէս մեզմով իջնելու է դէպ ի գաւակը : Բոլոր յօդուածներն ըլլալու են հաստատուն և ուժեղ :

Մեր յաջորդ թուոյն մէջ պիտի յիշենք դէպքեր որ յայտնի կը ցուցնեն փղին զարմանալի հանճարը և օգտակարութիւնը :

ԲԱՒԵՐՈՒ ԽԱՂ

Այս պատկերը կը ցուցնէ տղայոց զուարթ խումբ մը որ « Բաւերու խաղով » կը զբօսնուն : Կրտսնէք որ իւրաքանչիւր տղայ ունի մատիտ կամ կապարեայ գրիչ մը և կտոր մը թուղթ : Շատ յարմար խաղ է այս ձեռնուան երկար գիշերներու համար , և է նաև շատ օգտակար սովորեցունելու համար տղայոց ուղիղ հեղելու ստի կ'ուղենք հոս բացատրել այս խաղը յօգուտ մեր մանուկ ընթերցողաց :

Խաղացողներն ունենալով մէն մի կապարեայ գրիչ և թուղթ , կ'ընտրեն բառ մը , զորօրինակ կ'ընտրեն բառը , զոր իւրաքանչիւրը կը գրէ յստակ իւր թուղթին գլուխը :

Յետոյ անոնցմէ մին ժամացոյցը կը նայի , և իմացունելէն ետքը ժամանակը , կու տայ միւսներուն երկու , երէկամ աւելի բոպէ ժամանակ , որուն մէջ անոնք պիտի ջանան գրելու իւրաքանչիւր իւր թուղթին վրայ , այնչափ շատ բառեր որչափ կրնան : Այս բառերէն իւրաքանչիւրը պիտի սկսի ընտրուած բառին առաջին գրով , և պիտի պարունակէ այն գրիչըրը միայն որ բառին մէջ , զորօրինակ կ'ընտրեն բառին մէջ , կան , և որ և իցէ գիր գործածուելու չէ աւելի յաճախ քան զոր կայ

ընտրուած բառին մէջ :

Դիցուք թէ խաղացող տղայք երեք են , Մարիամ , Սիմոն և Եւնիկէ . դիցուք նաև թէ Սիմոնի ձեռքն է ժամացոյցը . երբ կը լրանայ որոշեալ ժամանակը , Սիմոն կ'ըսէ « ժամանակը լրացաւ » , և իսկոյն կը դադարին գրողները , և անոնց բառերուն ցուցակը զորս գրեցին՝ այս է .

Սիմոն	Մարիամ	Եւնիկէ
կաթ 0	կաթ 0	կաթ 0
կաթի 1	կաթի 1	կին 1
կաթին 1	կաթին 1	կան 0
կադ 2	կան 0	կոգի 1
կան 0	կոթ 0	կոթ 0
կին 1	կոթի 1	կամ
կոթ 0	կոգի 1	
կոթի 1	1	
4		
7	5	2

1 թուանչանը , վասն զի Եւնիկէի ցանկին մէջ չկայ այն բառը : Սիմոնի ցանկը ընկաւ : Հիմա Մարիամին կը հարցուի թէ իւր ցանկին մէջ կայ բառ մը որ չգտնուիր Սիմոնի ցանկին մէջ : Մարիամի ցանկին մէջ կայ կոթ բառը որ կայ նաև Եւնիկէի ցանկին մէջ , բայց չկայ Սիմոնի ցանկին մէջ , ուստի այն բառին առջև կը գրուի 1 թուանչանը : Մարիամին ցանկն ևս ընկաւ , բայց Եւնիկէ կ'ըսէ թէ իւր ցանկին մէջ կայ բառ մը որ նշանակուած չէ ոչ Սիմոնի և ոչ Մարիամի ցանկին մէջ , և այս բառն է կոթ , և Եւնիկէ կը խորհի թէ իրաւունք ունի այն բառին առջև դնել 2 թուանչանը , վասն զի Սիմոն և Մարիամ չունին այն բառն իրենց ցանկին մէջ : Բայց Սիմոն կը գոչէ , «Ոչ , ոչ , Մարիամ և ես կը չահինք մէկ մէկ թիւ , վասն զի կոթ բառին մէջ կայ գրիչ , որ չկայ կոթի բառին մէջ » : Այսպէս Սիմոն և Մարիամ իրենց շահած թուանչաններուն վրայ կ'աւելցունեն 1 թուանչանն , և Եւնիկէի ցանկին մէջ կոթ բառը կը մնայ առանց թուանչանի , և այս կը ցուցնէ թէ այն բառը սխալ է իւրաքանչիւր իւր



Տղայք որ բաւերու խաղ կը խաղան

Արդ , Սիմոն կը կարգայ նախ իւր բառերը սկսելով կոթ բառէն : Որովհետև երեքն ալ գրած են այս բառը , իւրաքանչիւր կը գրէ զրոյ մը այն բառին առջև : Սիմոնի երկրորդ բառն է կոթ , զոր ունի նաև Մարիամ , բայց Եւնիկէ չունի . ուստի Սիմոն և Մարիամ կը գրեն այն բառին առջև 1 թուանչանը , ցուցնելու համար թէ իրենցմէ մին չէր գտած այն բառը : Եւնիկէ կ'ընտրէ կոթ բառին համար , զոր երկուքն ունին , և Եւնիկէ չունի : Սիմոնի չորրորդ բառն է կոթ , զոր միւս երկուքը չունին , ուստի Սիմոն կը գրէ այս բառին առջև 2 թուանչանը :

Հինգերորդ բառին առջև 0 գրուած է , վասն զի երեքին ցուցակին մէջ ևս կայ այս բառը : Մարիամ չունի վեցերորդ բառը որ է կոթ , ուստի Սիմոն և Եւնիկէ կը գրեն այս բառին առջև 1 , կոթ բառը ունի զրոյ մը , վասն զի այս բառն երեքին ցանկին մէջ ալ կայ , և կոթ բառին առջև կայ

թուանչանները կը գումարէ , և կը տեսնուի թէ Սիմոն ունի 7 թիւ , Մարիամ 5 և Եւնիկէ 2 :

Յետոյ խաղը կը շարունակուի , և խաղացողք կը ջանան գտնել բառեր որ կը սկսին « գրով » որ է կոթի բառին երկրորդ գրիչը , և գտնուած բառերն ունենալու չեն գիրիչ որ չեն գտնուիր կոթի բառին մէջ : Յետոյ խաղացողք պարտին գտնել բառեր որ թ գրով կը սկսին , և ունին այն գիրիչըրը միայն որ կան կոթի բառին մէջ : Այսպէս կը շարունակուի մինչև որ կոթի բառին բոլոր գրիչըրը լմնան : Յետոյ խաղացողք կը գումարեն այն թիւերը զորս իւրաքանչիւր անգաման չահած են , և յաղթող է այն որ ամենէն աւելի թիւ հաշուած է :

Ստեփանյան Միտիլդատի կողմէն
 ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆ
 Ծիծառներու տուն
 ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆ
 ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ